Ճակատեն

Բնակչություն՝ 148

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 12 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ

Ճակատեն գյուղը գտնվում է Կապան ք-ից 6 կմ հարավ–արևելք, Մեղրու լեռնաշղթայի արևելյան հատվածի գեղատեսիլ անտառածածկ լանջին: Կլիման տաք է, տեղումները՝ բավարար:
Սյունիքի հին գյուղերից է, ըստ նոր հարկացուցակի Տաթևի վանքին տալիս էր 1200 դահեկան պտղի հարկ: Գյուղի շրջակայքում պահպանվել են ս.Հռիփսիմե եկեղեցին (10-րդ դ) . մատուռներ, կամուրջ (17-ր դ), մի քանի (Շինաթաղ. Գեղեցուխութ, Իրիգիս, ’Գրմեշ, Շնղոեն) գյուղատեղիներ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 5532 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1567հա, որից՝
- վարելահող՝ 107 հա, բազմամյա տնկարկ՝ 6հա, խոտհարք՝ 104 հա, արոտ՝ 506 հա, այլ հողատեսք՝844 հա
- բնակավայրերի հողեր՝ 41 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 2 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6 հա,
- անտառային հողեր՝3868 հա, որից անտառածածկ՝ 3547 հա
- ջրային հողեր՝ 45 հա